



Ծրագրի ամփոփ նկարագիր

Ծրագրի ամփոփ նկարագրերը (ԾԱՆ) պարունակում են ծրագրի մասին համառոտ տեղեկատվություն: Քանի որ ԾԱՆ-ը ընթացիկ աշխատանքային փաստաթուղթ է, դրա սկզբնական տարբերակում գուցե ներառված չլինեն որոշ տեղեկություններ, սակայն նոր տեղեկությունների ի հայտ գալուն զուգահեռ, դրանք նույնպես կներառվեն փաստաթղթում: Առաջարկվող ծրագրերի մասին տեղեկատվությունը նախնական և ուղղորդող բնույթ է կրում:

ԾԱՆ-ի կազմման ամսաթիվը –

ԾԱՆ-ը թարմացվել է 2014թ. սեպտեմբերի 16-ինը

Ծրագրի անվանումը Էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգի վերակառուցման ծրագիր

Երկիր Հայաստան

Ծրագրի համարը 46416-002

Կարգավիճակ Հաստատված է

Աշխարհագրական դիրքը Երևան

Երկրի համար որևէ ծրագիր կամ ռազմավարություն պատրաստելիս, որևէ ծրագիր ֆինանսավորելիս, կամ սույն փաստաթղթում որևէ կերպ նշելով կամ հղում անելով կոնկրետ աշխարհագրական տարածքին՝ Ասիական Զարգացման Բանկը մտադրություն չունի որևէ դատողություն անել որևէ տարածքի իրավաբանական կամ այլ կարգավիճակի վերաբերյալ:

Դասակարգում՝ ըստ ոլորտի կամ ենթաոլորտի –

Թեմատիկ դասակարգում –

Գենդերային մոտեցման կարգեր –

■ Ֆինանսավորում

Աջակցության տեսակ/տարբերակ	Հաստատման համարը	Ֆինանսավորման աղբյուրը	Հաստատված գումարը (հազարներով)
Վարկ	3150	Ասիական զարգացման հիմնադրամ	37,000
–	–	Գործընկեր կողմը	13,000
Ընդամենը			50,000 ԱՄՆ դոլար

■ Երաշխիքների դասերը

Երաշխիքների դասերին մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք.
<http://www.adb.org/site/safeguards/safeguard-categories>

Բնապահպանություն	B
Հարկադիր վերաբնակեցում	C
Բնիկներ	C

■ Բնապահպանական և սոցիալական խնդիրների ամփոփագիր

Բնապահպանական ասպեկտներ

Նախնական բնապահպանական քննությունը պարզել է, որ ծրագիրը կունենա ընդամենը մի քանի չնչին բացասական հետևանք (մեղմացման միջոցառումներ իրականացնելուց հետո), հատկապես շինարարության փուլում: Գործառնական փուլի ընթացքում դրական ազդեցությունն ակնհայտ է և կհանգեցնի Հայաստանում ավելի հուսալի էներգամատակարարմանը: Նախնական Բնապահպանական քննության արդյունքները հրապարակվել են:

Հարկադիր վերաբնակեցում

Չկա հարկադիր վերաբնակեցում:

Բնիկներ

Ծրագիրը չի ազդելու բնիկների վրա:

■ Հաղորդակցություն շահակիցների հետ, նրանց մասնակցությունն ու խորհրդատվությունը

Ծրագրի նախագծման փուլում-

Նախնական բնապահպանական քննության նախապատրաստման հետ համատեղ անցկացվել է հանրության հետ խորհրդակցություն:

Ծրագրի իրականացման փուլում-

Անցկացվելու է խորհրդակցություն շահակիցների հետ:

■ Նկարագիր

—

■ Ծրագրի հիմնավորումը և կապը երկրի/տարածաշրջանի ռազմավարության հետ

Հայաստանը չունի նավթի կամ բնական գազի պաշարներ, և ներմուծում է իր հանածո վառելիքի պաշարների մեծ մասը Ռուսաստանից (Վրաստանի միջոցով), ինչպես նաև սկսել է Իրանից գազ ներկրել: Ներմուծումները կազմում են ընդհանուր առաջնային էներգամատակարարման մոտ 77%-ը, իսկ բնական գազի ներկրումը Ռուսաստանից կազմում է ընդհանուր էներգետիկ ներմուծման մոտ 81%-ը: Էներգետիկ անվտանգության հզորացումը և էներգաարդյունավետության բարելավումը երկրի առաջնիերթ նպատակներն են: Տեղական էներգետիկ ռեսուրսների զարգացումը և արտադրման, հաղորդման և բաշխման հին և անարդյունավետ ենթակառուցվածքների վերակառուցումը վճռորոշ են երկրի էներգետիկ անվտանգության համար: Հայաստանի էներգետիկ ոլորտի հիմնական խնդիրը էներգետիկ ռեսուրսների օգտագործման ցածր արդյունավետությունն է: Այս մասին վկայում են վերականգնվող էներգիայի հարուստ ռեսուրսների շատ սահմանափակ օգտագործումը, ջերմային և հիդրոէլեկտրակայանների ցածր արդյունավետությունը, էլեկտրաէներգիայի հաղորդման և արտադրման համեմատաբար խոշոր կորուստները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտահանման ներուժի թերի իրացումը: Ոլորտի ենթակառուցվածքների եծ մասը կառուցվել է խորհրդային տարիներին և զգալիորեն վատթարացել է, քանի որ վերականգնման և պահպանման համար չկար բավարար ֆինանսավորում: Էներգիա արտադրող կայաններում տեղադրված սարքավորումների մոտ 70%-ը շահագործման մեջ է գտնվում արդեն ավելի, քան 30 տարի, իսկ 50%-ը՝ ավելի, քան 40 տարի: Էլեկտրահաղորդման ակտիվների, այդ թվում՝ ենթակայանների միջին տարիքը 45 տարի է, իսկ բաշխման ակտիվների տարիքը՝ 32 տարի: Հաղորդման ենթակառուցվածքների մեծ մասը հասել է իր օգտակար կյանքի ավարտին և կապիտալ վերակառուցման կամ փոխարինման կարիք ունի, որպեսզի հնարավոր լինի շարունակել նրա հուսալի շահագործումը: 220 կՎ օդային գծերի գրեթե 90%-ը վերակառուցման կարիք ունեն, և ցածր լարման ենթակայանների մոտ 42% գտնվում են թերի տեխնիկական վիճակում: ԱԶԲ-ի միջանկյալ գործառնական ռազմավարությունը Հայաստանի համար, որը հաստատվել է 2006թ., նշել է էներգետիկայի ոլորտը որպես ԱԶԲ-ի միջամտության գերակա ոլորտ: Հայաստանի համար *Երկրի գործընկերության ռազմավարությունը* ներկայումս գտնվում է նախապատրաստման փուլում, և նախատեսվում է այն ավարտել 2014թ.: ԱԶԲ-ն կշարունակի աջակցել Հայաստանին էներգետիկ ռեսուրսների օգտագործման բարելավման գործընթացում: Էներգետիկայի հատվածում ԱԶԲ-ի գործունեության հիմնական ոլորտներն ընտրվել են այս ոլորտում կառավարության առաջնահերթությունների հիման վրա, համահունչ են ԱԶԲ-ի՝ 2020թ. ռազմավարությանը և 2009թ. էներգետիկայի ոլորտում քաղաքականությանը և ներառում են. (i) հիդրոէլեկտրաէներգիա գեներացնող խոշոր ակտիվների վերակառուցում, (ii) հաղորդման և բաշխման հնացող ակտիվների վերակառուցում, (iii) էներգետիկ համակարգերի միջսահմանային փոխկապակցման բարելավում, (iv) վերականգնվող էներգիայի զարգացում և (v) քաղաքականության մշակում և ինստիտուցիոնալ զարգացում: Ծրագիրը ներառված է ԱԶԲ-ի՝ Հայաստանում իրականացվող գործառնությունների 2014-2016թթ. բիզնես պլանում: Ծրագրի ակնկալվող արդյունքը Հայաստանում էներգամատակարարման հուսալիության և արդյունավետության բարելավումն է:

■ Զարգացման գործընթացի վրա ազդեցություն

Հայաստանում էներգամատակարարման հուսալիություն և արդյունավետության բարելավում:

■ Ծրագրի նվաճումները

Նվաճումների նկարագիր

Նվաճումներին հասնելու ուղղությամբ արվող քայլերը

Ներպետական փոխանցման ցանցի գործառնական – արդյունավետության բարձրացում

■ Արդյունքներ և իրականացման առաջընթացը

Ծրագրի արդյունքների նկարագիր

Իրականացման առաջընթացի նկարագիր (Արդյունքներ, միջոցառումներ և խնդիրներ)

Լիովին իրականացվել SCADA համակարգի և – Էլեկտրաէներգիայի կառավարման համակարգի ընդլայնում: Հաջողությամբ ավարտի հասցնել երկու 220 կՎ ենթակայանների՝ Շինուհայր և Ագարակ-2 վերակառուցումը, ինստիտուցիոնալ զարգացումը, կարողությունների ստեղծումը և ծրագրի կառավարումը:

Զարգացման նպատակների կարգավիճակը

Զգալի փոփոխություններ

–

–

■ Բիզնես հնարավորություններ

Առաջին լիստինգ ամսաթիվը 2014թ. հուլիսի 4-ը

Խորհրդատվական ծառայություններ

Ե՛վ «ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ընկերությունը, և՛ «ԲԱՐՁՐԱՎՈՒՏ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ընկերությունը կվարձեն յուրաքանչյուրը մեկական խորհրդատվական ընկերություն ծրագրի իրականացման համար: Երկու ընկերությունները ԾԻԳ-երին կտրամադրեն տեխնիկական, ֆինանսական և վարչական աջակցություն ծրագրի իրականացման ընթացքում: Խորհրդատուների ընտրությունն իրականացվելու է համաձայն ԱԶԲ-ի՝ խորհրդատուների օգտագործման վերաբերյալ ուղեցույցների (2013թ., իր՝ ժամանակ առ ժամանակ արվող փոփոխություններով) և ծրագրի համար մշակված գնումների պլանի: Որակի և գնի վրա հիմնված ընտրությունը, որտեղ որակի և ծախսերի հարաբերակցությունը կազմում է 90:10, կլինի խորհրդատվական ընկերությունները վարձելու ընդունված մեթոդը, հաշվի առնելով առաջադրանքների բարդությունը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը:

Գնումներ

ԱԶԲ-ի վարկի միջոցներով ապրանքների և աշխատանքների գնումները կիրականացվեն համաձայն ԱԶԲ-ի Գնումների ուղեցույցի (2013թ., իր՝ ժամանակ առ ժամանակ արվող փոփոխություններով) և ծրագրի համար մշակված գնումների պլանի: Գնումները իրականացվելու են միջազգային մրցութային կարգի համաձայն, օգտագործելով արտադրությունների/սարքավորման համար մրցութային ստանդարտ փաստաթղթերը (մեկ փուլ, մեկ ծրար):

Գնումների և խորհրդատվական ծառայությունների մասին ծանուցումներ

<http://www.adb.org/projects/46416-002/business-opportunities>

■ Ժամանակացույց

Հայեցակարգի ընդունում	2012թ. հոկտեմբերի 22-ին
Փաստերի հավաքագրում	2014թ. փետրվարի 10-ից մինչև փետրվարի 21-ը
Տնօրինության կողմից վերանայում	2014թ. մայիսի 21-ին
Հաստատում	2014թ. հուլիսի 31-ին
Վերջին ստուգող առաքելություն	–

■ Ուղենիշները

Հաստատման համարը	Հաստատում	Ստորագրում	Ուժի մեջ մտնելը	Փակում		
				Մկզբնական	Վերանայված	Փաստացի
Վարկ 3150	14թ. հուլիսի 31-ը	14թ. սեպտեմբերի 5-ը	–	20թ. հունիսի 30-ը	–	–

■ Օգտագործում

Ամսաթիվ	Հաստատման համարը	ԱԶԲ (...հազար ԱՄՆ դոլար)	Այլ աղբյուրներ (...հազար ԱՄՆ դոլար)	Զուտ տոկոսներ
Ընդամենը կնքված պայմանագրեր				
14թ. սեպտեմբերի 16-ը	Վարկ 3150	0	0	0.00%
Կուտակային հատկացումներ				
14թ. սեպտեմբերի 16-ը	Վարկ 3150	0	0	0.00%

■ Պայմանների կարգավիճակը

Պայմանները դասակարգված են ըստ հետևյալ դասերի. աուդիտն անցած հաշիվներ, երաշխիքներ, սոցիալական, ոլորտային, ֆինանսական, տնտեսական և այլն: Պայմանների համապատասխանությունը գնահատվում է ըստ դասի՝ հետևյալ չափանիշների կիրառմամբ. (i) Բավարար՝ առկա է համապատասխանություն այս դասի բոլոր պայմաններին, թույլ է տրվում առավելագույնը մեկ բացառություն, (ii) Մասամբ բավարար՝ առկա է այս դասում առավելագույնը երկու պայմաններին անհամապատասխանություն, (iii) Անբավարար՝ այս դասում խախտված են երեք կամ ավելի պայմաններ: Համաձայն 2011թ. Հանրության հետ կապերի քաղաքականության՝ պայմանների համապատասխանության գնահատումը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար կիրառվում է միայն այն ծրագրերի նկատմամբ, որոնք հրավիրվել են բանակցությունների 2012թ. ապրիլի 2-ից հետո:

Հաստատման համարը	Դաս						
	Ոլորտային	Սոցիալական	Ֆինանսական	Տնտեսական	Այլ	Երաշխիքներ	Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ
Վարկ 3150	–	–	–	–	–	–	–

■ Պատասխանատու անձանց կոնտակտային տվյալներ և թարմացված տեղեկություններ

Պատասխանատու պաշտոնյա ԱԶԲ-ում	Տիանհուա Լուո, (tluo@adb.org)
Պատասխանատու բաժին ԱԶԲ-ում	Կենտրոնական և արևելյան Ասիայի բաժին
Պատասխանատու ստորաբաժանումներ ԱԶԲ-ում	Էներգետիկայի ստորաբաժանումներ, Կենտրոնական և արևելյան Ասիայի
Իրականացնող գերատեսչություններ	—

■ Հղումներ

Ծրագրի էլեկտրոնային կայք	http://www.adb.org/projects/46416-002/main
Ծրագրի փաստաթղթերի ցանկ	http://www.adb.org/projects/46416-002/documents